


**Ստեփանոս Մեծրկա որդու ՇԼԲ (532) - անյա Չատկացուցակը
(վերականգնում)**

Գալստյան Գոր Ա.

*պատմական գիտությունների թեկնածու, Աստվածաբանության ֆակուլտետի դասախոս,
Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0000-0003-3058-7589>

gor.galstyan@ysu.am

ՀՏԳ՝ 2-56; EDN: NHFSIL

DOI: 10.58587/18292437-2024.6-136

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Ստեփանոս Մեծրկա որդի, «Մեկնութիւն տոմարի», «Պատճէն տոմարի», Չատկացուցակ, հայոց տոմար, հուլյան տոմար, Լուսնի լրում, յոթներյակ, վերադիր, նահանջ

**532-летний пасхальный календарь Степаноса, сына Мецрки
(восстановление)**

Галстян Гор А.

кандидат исторических наук, преподаватель факультета Богословия, ЕГУ (Ереван, РА)

Аннотация. Данное исследование имеет как календарное, так и источниковедческое и филологическое значение. В статье предпринята попытка восстановления основных правил двух 19-летних циклов 532-летнего пасхального календаря Степаноса, сына Мецрки.

В статье рассматривается проблема того, что Степанос, сын Мецрки создал проект стационарного календаря, в котором началом года считается Навасард 1=1 марта, путем ретроспективного вычисления найдено соответствие 1 Навасарда = 1 марта в армянском подвижном календаре, а именно четырехлетие 1080-1083 годов. Учитывая это, мы представили датированные соответствия праздников, сезонов солнечного года и астрономических явлений в течение года согласно юлианскому календарю и проекту стационарного календаря Степаноса, сына Мецрки.

Обратившись к Стефаносу, сыну Мецрки и его “Толкованию календаря”, взяв за основу сообщенную им информацию, *о 19-летнем цикле полнолуния, системе врузелето* (арм. յոթներյակ), а также *эпакте* (арм. վերադիր), мы попытались восстановить изображение созданных им двух 19-летних пасхальных списков в таблицах. 532-летний Пасхальный список, составленный Стефаносом, сыном Мецрки, состоит из 28 частей с 19-летним периодом Полнолуния. Правила восстановленного нами списка Пасхальных праздников относятся к *високосному* (арм. նահանջ), *году* (указаны годы первого круга 532-летнего периода, великая армянская дата второго круга 532-летнего периода, а также к нынешнему году), *эпакту, врузелету, 19-летию Полнолуния и дню Пасхи*. Приведенные правила сопровождаются подробными комментариями, которые иллюстрируют выбор значений, представленных для составления списка.

Ключевые слова и словосочетания: Степаноса, сына Мецрки, “Толкование календаря”, “Глава календаря”, Пасхальный список, армянский календарь, юлианский календарь, лунный цикл, *врузелето, эпакт, високосный*

**The 532-Year Paschal Table of Stepanos, the Son of Metzrka
(Restoration)**

Galstyan Gor A.

Ph.D in History, Lecturer at the faculty of Theology at YSU (Yerevan, RA)

Abstract. This study holds both calendrical and source-critical, as well as philological significance. The article attempts to restore the main rules of two 19-year cycles of 532-year Paschal table of Stepanos, the Son of Metzrka. In the article, we address the issue that Stepanos created a project for a stationary calendar, which recognizes the beginning of the year as Navasard 1 = March 1, by retrospectively calculating the equivalent of Navasard 1 = March 1 in the Armenian portable calendar, namely the four-year period of 1080-1083. Taking into account the above, we have presented the equivalents of the dates of holidays, seasons and astronomical phenomena occurring throughout the year, according to the draft stationary calendar compiled by Stepanos, the Son of Metzrka and Julian calendar.

Considering this, we have presented the date equivalents of holidays, the seasons of the solar year, and astronomical phenomena throughout the year according to the Julian calendar and fixed calendar project of Stepanos, the Son of Metzrka.

Referring to Stepanos, the Son of Metzrka and his “Interpretation of the Calendar”, taking as a basis the information reported by him, about the *19-year cycle of the full moon, the vruzeleto system* (арм. յոթներյակ), as well as *epact* (арм.

վերադարձ), we tried to reconstruct the image of the two 19-year Easter lists created by him in tables. The 532-year Easter schedule compiled by Stepanos, the Son of Metzrka consists of 28 parts with a 19-year period of Full Moon. The rules of the list of Easter holidays reconstructed by us refer to the *leap* (arm. նսահանջ), *the year* (the years of the first circle of the *Great Paschal cycle* [Ծ-եակ] are given, also the great Armenian date of the second circle of the Great Paschal cycle, and the Dionysian year), *the epact*, *the vruzeleto system*, *the 19-year Full Moon cycle and the Easter day*. These rules given are accompanied by detailed commentaries that illustrate the choice of meanings presented to make the list.

Keywords & phrases: Stepanos, the Son of Metzrka, "Interpretation of the Calendar," "Calendar Chapters," Paschal table, Armenian calendar, Julian calendar, Lunar cycle, vruzeleto system, epact, leap year

Ներածություն

Սույն հոդվածի նպատակն է վերականգնել Ստեփանոս Մեծրկա որդու կազմած Չատկացուցակի երկու 19-ամյակների աղյուսակային պատկերը, ներկայացնել տարվա ընթացքում տեղի ունեցող տոների, արևային տարվա եղանակների ու աստղագիտական երևույթների ամսաթվային համարժեքները՝ ըստ հուլյան և Ստեփանոս Մեծրկա որդու կազմած անշարժ տոմարի նախագծի:

Հոդվածի շարադրման ընթացքում մեր կողմից օգտագործված պատմա-աղբյուրագիտական նյութը բաժանվում է հետևյալ խմբերի՝ ձեռագիր և տպագիր սկզբնաղբյուրներ, ուսումնասիրություններ՝ գրքեր և հոդվածներ: Պահպանված սուղ տեղեկությունների հիման վրա, որոնք վերաբերում են Մեծրկա որդու 532-ամյա Չատկացուցակի համար հիմք հանդիսացող կանոններին, փորձել ենք վերականգնել Չատկացուցակի երկու 19-ամյակների աղյուսակային պատկերը: Մասնավորապես, Մեծրկա որդու օգտագործած յոթներյակների համակարգը գետեղված է ՄՄ 1973 ձեռագրում, որի մասին հիշատակում է Գ. Սիմոնյանը իր «Հովհաննես Սարկավագը և իր «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ»-ն» թեմայով ատենախոսության մեջ: Ձեռագրում առկա է նաև Լուսնի լրման 19-ամյակը՝ հայոց ամիս-ամսաթվերով՝ ըստ Մեծրկա որդու ստեղծած անշարժ տոմարի, նաև Հուլյան շարքում տոմարագետի օգտագործած վերադիրների համակարգը, ինչի մասին տեղեկանում ենք ենք Ջ. Էյնաթյանի աշխատասիրությամբ և Գ. Տեր-Վարդանյանի աշխատասիրությամբ ու խմբագրությամբ կազմված ««Պատճեն տոմարի» (Է-ԺԵ. դդ)» աշխատությունից և Ռ. Վարդանյանի «Անանիայի Ծիրակացույ (Ծիրակունույ) համարողի ԾԼԲ կարգը» երկասիրությունից: Թեմայի ուսումնասիրման համար արժեքավոր սկզբնաղբյուրներ են եղել Ա. Աբրահամյանի «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը» և Ջ. Էյնաթյանի աշխատասիրությամբ հրատարակված «Հակոբ Դրիմեցի, Տոմարագիտական աշխատություններ» աշխատությունները: Մեծրկա որդու գործունեության մասին հայագիտության մեջ պահպանված սակավ տեղեկությունները լավագույնս ներկայացրել է Ռ. Վարդանյանը հիմնականում իր ««Պատճեն տոմարի հայոց» -ի խմբագրու-

թյունների ժամանակի որոշումը (6-18-րդ դդ.)» աշխատության մեջ: Մեծրկա որդու կազմած անշարժ տոմարի նախագծի առավելություններին անդրադարձել է Բ. Թումանյանն իր «Տոմարի պատմություն» գործում:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ցայսօր Հայոց տոմարի պատմությանն ու մեկնություններին վերաբերող որոշ աղբյուրագիտական և ձեռագրական միավորներ չեն ենթարկվել համակողմանի քննության և պարզաբանման, դրանց վերաբերյալ համեմատական-վերլուծական համապարփակ աշխատանքներ չեն իրականացվել ինչպես հայ, այնպես էլ օտարագրի տոմարագետների կողմից: Կարևոր է նաև, որ մեր օրերում դրանց ուսումնասիրության նվազման միտում է նկատվում, ինչը մեծ կորուստ կարող է լինել հայագիտության համար, քանի որ տոմարագիտությունը մեր կրթության մեջ ներշնչանական գիտությունների կարևոր մաս է կազմել: Ստեփանոս Մեծրկա որդու ստեղծած Չատկացուցակի վերականգնումը արդիական է, քանի որ այն լրացնում է ԺԲ դարի հայ տոմարագիտական մտքի ուսումնասիրումն ու այն դարձնում առավել համակողմանի ու ամբողջական:

Ստեփանոս Մեծրկա որդու ԾԼԲ (532)-ամյա Չատկացուցակը

Հայ մատենագրության մեջ շատ քիչ տեղեկություններ են պահպանվել Ստեփանոս Մեծրկա որդու մասին: Ըստ Ռ. Վարդանյանի ուսումնասիրությունների՝ Ստեփանոս Մեծրկա որդին խմբագրել է «Պատճենը», ինչը հայտնի է դարձել ՄՄ 1999 գրչագրի Ա մասի վերլուծությամբ: Վարդանյանը վստահ է նաև, որ 1126 թ. Ստեփանոս Մեծրկա որդին գրել է «Մեկնութիւն տոմարի» բնագիրը, որտեղ գետեղված են եղել «Սկիզբն տումարի հայոցը», ապա իր անշարժ տոմարի նախագիծը, այլ «Պատճեններ», նաև Արևի շրջապտույտը համաստեղություններով, 19-ամյակը (ըստ այդմ էլ այնտեղ գետեղված պետք է լինե՞ր Ծ-եակը 2-րդ շրջապտույտի համար), իր յոթներյակների համակարգը և այլն, որոնք հայտնի են ՄՄ 1999, ՄՄ 3082, ՄՄ 1973 գրչագրերից [8, էջ 195]: Հարկ է նշել, որ Ստեփանոս Մեծրկա որդու անշարժ տոմարի նախագիծը, ի տարբերություն Հովհաննես Սարկավագի ստեղծածի, տարեսկիզբն

ընդունում է նաև սարդի 1 = մարտի 1՝ հետադարձ հաշվարկով գտնելով հայոց շարժական տոմարի նավասարդի 1 = մարտի 1 համարժեքը, այն է՝ ՇԻԹ-ՇԼԲ (1080-1083 թթ.) քառամյակը: Նրա 19-ամյակը, որի առաջին տարվա համարժեքը հոռի 5 (= ապրիլի 4, Ծ-եակի 2-րդ շրջապտույտի 10-րդ տարին) ցույց է տալիս, որ նա իր նախագծով ստեղծել է Ծ-եակի Չատկացուցակ՝ սկսելով Հայոց փոքր թվականի 1-ին տարուց՝ հաշվման իմաստով (1085 թ.), բայց 19-ամյակի առաջին տարին ընդունել է հոռի 5 (= ապրիլի 4) լրման տարին կամ Հայոց փոքր թվականի 10-րդ տարին, ինչպես նախորդ շրջանի տոմարագետները [8, էջեր 104-105]: Հիմք ընդունելով այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Ստեփանոս Մեծրկա որդու Լուսնի լրման 19-ամյակին, յոթներյակների, նաև վերադիրների համակարգին՝ փորձ ենք կատարել՝ վերականգնելու վերջինիս ստեղծած Չատկացուցակի երկու 19-ամյակների աղյուսակային պատկերը: Մեծրկա որդու յոթներյակների համակարգը պահպանված է ՄՄ 1973 ձեռագրում, որը կներկայացնենք ներքոնշյալ շարադրանքում: Նույն տեղում առկա է նաև Լուսնի լրման 19-ամյակը՝ հայոց ամիսամսաթվերով՝ ըստ իր ստեղծած անշարժ տոմարի.

- ա) հոռի Ե,
- բ) նաւասարդ ԻԴ,
- գ) հոռի ԺԳ,
- դ) հոռի Բ,
- ե) նաւասարդ ԻԱ,
- զ) հոռի Ժ,
- է) նաւասարդ ԻԹ,
- ր) հոռի ԺԷ (պետք է լինի ԺԸ [ուղղումը մերն է՝ Գ. Գ.]),
- թ) հոռի Է,
- ժ) նաւասարդ ԻԵ,
- ժա) հոռի ԺԴ,
- ժբ) հոռի Գ,
- ժգ) նաւասարդ ԻԲ,
- ժդ) հոռի ԺԱ,
- ժե) նավասարդ Լ,
- ժզ) հոռի ԺԹ,
- ժէ) հոռի Լ,
- ժր) նավասարդ ԻԷ,
- ժթ) հոռի ԺԶ [1, թ. 54ա]:

Ձեռագրի նշյալ աղյուսակը տեղեկատվություն է տալիս նաև Հուլյան շարքում տոմարագետի օգտագործած վերադիրների համակարգի վերաբերյալ՝ ԺԱ, ԻԲ, Գ, ԺԴ, ԻԵ, Զ, ԺԷ, ԻԸ, Թ, ԻԱ, Բ, ԺԳ, ԻԴ, Ե, ԺԶ, ԻԷ, Լ, ԺԹ, Լ [1, թ. 54ա; 5, էջ 154; 7, էջ 152]:

Ստեփանոսի կազմած անշարժ տոմարի նախագծով՝ աւելեաց 1-ը համընկնում էր փետր-

վարի 24-ին և ոչ նահանջ տարիներին հռոմեականի հետ վերջանում էր փետրվարի 28-ին, իսկ նահանջ տարիներին՝ փետրվարի 29-ին: Այսու, պարզ է դառնում անշարժ տոմարի այս նախագծի և հուլյան տոմարի զուգակցությունը [6, էջ 122]: Հետաքրքրական է նաև, որ տարին մարտի 1-ից սկսելը ևս մեկ առավելություն ուներ. 1084 թ. Հայոց մեծ թվականի նավասարդի 1-ը, հետզհետե տեղափոխվելով, համընկել էր փետրվարի 29-ին: Այսինքն՝ այս անշարժ տոմարին անցումը տեղի էր ունենում անմիջապես [6, էջ 122]: Սակայն, այս անշարժ տոմարի նախագիծը մեծ տարածում չի գտնում: Բայցևայնպես, կարևոր ենք համարում ներկայացնել տարվա ընթացքում տեղի ունեցող տոների, արևային տարվա եղանակների ու աստղագիտական երևույթների ամսաթվային համարժեքները՝ ըստ հուլյան և Ստեփանոս Մեծրկա որդու կազմած անշարժ տոմարի նախագծի.

- «Կադանդ հռոմայեցոց» (*հունվարի 1 = մարգաց 7*),
- «Յայտնութիւն» (*հունվարի 6 = մարգաց 12*),
- «Տեառնընդառաջ» (*փետրվարի 14 = հրոտից 21*),
- «Գարնանամուտ» (*մարտի 20 = նավասարդ 20*),
- «Աւետիք յունաց եւ հռոմայեցոց» (*մարտի 25 = նավասարդ 25*),
- «Աւետեաց Աստուածածնի» (*ապրիլի 6 = հոռի 7*) / (*ապրիլի 7 = հոռի 8*),
- «Անկաստեղ» (*ապրիլի 14 = հոռի 15*),
- «Ելաստեղ» (*մայիսի 24 = սահի 25*),
- «Ամառնամուտ» (*հունիսի 19 = տրէ 21*),
- «Աստուածածին» (*օգոստոսի 15 = արաց 18*),
- «Սուրբ խաչ» (*սեպտեմբերի 14 = մեհեկան 18*),
- «Աշնանամուտ» (*սեպտեմբերի 18 = մեհեկան 22*),
- «Պապանձումն Չաքարիայի» (*սեպտեմբերի 27 = արեգ 1*),
- «Յողութիւն Եղիսաբեթի» (*հոկտեմբերի 9 = արեգ 13*) / (*հոկտեմբերի 10 = արեգ 14*),
- «Յիսնականուտ» (*նոյեմբերի 18 = սահեկան 23*),
- «Ըմբռնաղ» (*նոյեմբերի 23 = սահեկան 28*),
- «Սուրբ Յակոբի բարեկենդան» (*դեկտեմբերի 9 = մարերի 14*),
- Չմեռնամուտ (*դեկտեմբերի 18 = մարերի 23*),
- «Ծնունդ այրագեաց» (*դեկտեմբերի 25 = մարերի 30*),
- «Յայտնութեան բարեկենդան» (*դեկտեմբերի 29 = մարգաց 4*):

Ներկայացնենք նաև Ստեփանոս Մեծրկա որդու՝ մեր վերականգնած Չատկացուցակի երկու 19-ամյա պարբերաշրջանի պատկերը՝ ըստ հուլյան և հայոց անշարժ (Ստեփանոս Մեծրկա որդու) տոմարների՝ հարկ եղած դեպքում կատարելով համապատասխան բացատրություններ:

Աղյուսակ 1. Ստեփանոս Մեծրիկա որդու ՃԼԲ (532)-անյա Չատիսցուցակը՝ ըստ Հուլյան տոմարի

Նահանջ	Թուական	Ծ-եան 2-րդ շրջ. հ.մ.թ.	Թուական (ներկա)	Վերադիր	Է-եղյակ	Էրուն	Քանիք	Չատիկն	Քանիք
1	2	3	4	5	6	7	8	9	10
	Ա	534 (533)	1085	Բ	Գ	Այր	ԺԳ	Այր	Ի
	Բ	535 (534)	1086	ԺԳ	Դ	Այր	Բ	Այր	Ե
	Գ	536 (535)	1087	ԻԴ	Ե	Սրտ	ԻԲ	Սրտ	ԻԸ
1	Դ	537 (536)	1088	Ե	Չ/Է	Այր	Ժ	Այր	ԺՉ
	Ե	538 (537)	1089	ԺՉ	Ա	Սրտ	Լ	Այր	Ա
	Չ	539 (538)	1090	ԻԷ	Բ	Այր	ԺԸ	Այր	ԻԱ
	Է	540 (539)	1091	Ը	Գ	Այր	Է	Այր	ԺԳ
2	Ը	541 (540)	1092	ԺԹ	Դ/Ե	Սրտ	ԻԷ	Սրտ	ԻԸ
	Թ	542 (541)	1093	Լ	Չ	Այր	ԺԵ	Այր	ԺԷ
	Ժ	543 (542)	1094	ԺԱ	Է	Այր	Դ	Այր	Թ
	ԺԱ	544 (543)	1095	ԻԲ	Ա	Սրտ	ԻԴ	Սրտ	ԻԵ
3	ԺԲ	545 (544)	1096	Գ	Բ/Գ	Այր	ԺԲ	Այր	ԺԳ
	ԺԳ	546 (545)	1097	ԺԴ	Դ	Այր	Ա	Այր	Ե
	ԺԴ	547 (546)	1098	ԻԵ	Ե	Սրտ	ԻԱ	Սրտ	ԻԸ
	ԺԵ	548 (547)	1099	Չ	Չ	Այր	Թ	Այր	Ժ
4	ԺՉ	549 (548)	1100	ԺԷ	Է/Ա	Սրտ	ԻԹ	Այր	Ա
	ԺԷ	550 (549)	1101	ԻԸ	Բ	Այր	ԺԷ	Այր	ԻԱ
	ԺԸ	550 (550)	1102	Թ	Գ	Այր	Չ	Այր	ԺԳ
	ԺԹ	552 (551)	1103	ԻԱ	Դ	Սրտ	ԻԵ	Սրտ	ԻԹ
5	Ի	553 (552)	1104	Բ	Ե/Չ	Այր	ԺԳ	Այր	ԺԷ
	ԻԱ	554 (553)	1105	ԺԳ	Է	Այր	Բ	Այր	Թ
	ԻԲ	555 (554)	1106	ԻԴ	Ա	Սրտ	ԻԲ	Սրտ	ԻԵ
	ԻԳ	556 (555)	1107	Ե	Բ	Այր	Ժ	Այր	ԺԴ
6	ԻԴ	557 (556)	1108	ԺՉ	Գ/Դ	Սրտ	Լ	Այր	Ե
	ԻԵ	558 (557)	1109	ԻԷ	Ե	Այր	ԺԸ	Այր	ԻԵ
	ԻՉ	559 (558)	1110	Ը	Չ	Այր	Է	Այր	Ժ
	ԻԷ	560 (559)	1111	ԺԹ	Է	Սրտ	ԻԷ	Այր	Բ
7	ԻԸ	561 (560)	1112	Լ	Ա/Բ	Այր	ԺԵ	Այր	ԻԱ
	ԻԹ	562 (561)	1113	ԺԱ	Գ	Այր	Դ	Այր	Չ
	Լ	563 (562)	1114	ԻԲ	Դ	Սրտ	ԻԴ	Սրտ	ԻԹ
	ԼԱ	564 (563)	1115	Գ	Ե	Այր	ԺԲ	Այր	ԺԸ
8	ԼԲ	565 (564)	1116	ԺԴ	Չ/Է	Այր	Ա	Այր	Բ
	ԼԳ	566 (565)	1117	ԻԵ	Ա	Սրտ	ԻԱ	Սրտ	ԻԵ
	ԼԴ	567 (566)	1118	Չ	Բ	Այր	Թ	Այր	ԺԴ
	ԼԵ	568 (567)	1119	ԺԷ	Գ	Սրտ	ԻԹ	Սրտ	Լ
9	ԼՉ	569 (568)	1120	ԻԸ	Դ/Ե	Այր	ԺԷ	Այր	ԺԸ
	ԼԷ	570 (569)	1121	Թ	Չ	Այր	Չ	Այր	Ժ
	ԼԸ	571 (570)	1122	ԻԱ	Է	Սրտ	ԻԵ	Սրտ	ԻՉ

Աղյուսակ 2. ՃԼԲ (532)-անյա Չատկացուցակ՝ ըստ հայոց անչարժ տոմարի (Ստեփաննոս Մեծրկա որդու)

Նստիանջ	Թուական	Ծ-հասկ 2-րդ շիջ. հ.մ.թ.	Թուական (ներկա)	Վերադիր	Է-երցակ	Լրումն	Քանիք	Չատկին	Քանիք
1	2	3	4	5	6	7	8	9	10
	Ա	534 (533)	1085	Է	Չ	Հոռի	ԺԴ	Հոռի	ԻԱ
	Բ	535 (534)	1086	ԺԸ	Է	Հոռի	Գ	Հոռի	Չ
	Գ	536 (535)	1087	ԻԹ	Ա	Նաւ	ԻԲ	Նաւ	ԻԸ
1	Դ	537 (536)	1088	Ժ	Բ/Գ	Հոռի	ԺԱ	Հոռի	ԺԷ
	Ե	538 (537)	1089	ԻԱ	Դ	Նաւ	Լ	Հոռի	Բ
	Չ	539 (538)	1090	Բ	Ե	Հոռի	ԺԹ	Հոռի	ԻԲ
	Է	540 (539)	1091	ԺԳ	Չ	Հոռի	Ը	Հոռի	ԺԴ
2	Ը	541 (540)	1092	ԻԴ	Է/Ա	Նաւ	ԻԷ	Նաւ	ԻԸ
	Թ	542 (541)	1093	Ե	Բ	Հոռի	ԺՉ	Հոռի	ԺԸ
	Ժ	543 (542)	1094	ԺՉ	Գ	Հոռի	Ե	Հոռի	Ժ
	ԺԱ	544 (543)	1095	ԻԷ	Դ	Նաւ	ԻԴ	Նաւ	ԻԵ
3	ԺԲ	545 (544)	1096	Ը	Ե/Չ	Հոռի	ԺԳ	Հոռի	ԺԴ
	ԺԳ	546 (545)	1097	ԺԹ	Է	Հոռի	Բ	Հոռի	Չ
	ԺԴ	547 (546)	1098	Լ	Ա	Նաւ	ԻԱ	Նաւ	ԻԸ
	ԺԵ	548 (547)	1099	ԺԱ	Բ	Հոռի	Ժ	Հոռի	ԺԱ
4	ԺԶ	549 (548)	1100	ԻԲ	Գ/Դ	Նաւ	ԻԹ	Հոռի	Բ
	ԺԷ	550 (549)	1101	Գ	Ե	Հոռի	ԺԸ	Հոռի	ԻԲ
	ԺԸ	551 (550)	1102	ԺԴ	Չ	Հոռի	Է	Հոռի	ԺԴ
	ԺԹ	552 (551)	1103	ԻՉ	Է	Նաւ	ԻԵ	Նաւ	ԻԹ
5	Ի	553 (552)	1104	Է	Ա/Բ	Հոռի	ԺԴ	Հոռի	ԺԸ
	ԻԱ	554 (553)	1105	ԺԸ	Գ	Հոռի	Գ	Հոռի	Ժ
	ԻԲ	555 (554)	1106	ԻԹ	Դ	Նաւ	ԻԲ	Նաւ	ԻԵ
	ԻԳ	556 (555)	1107	Ժ	Ե	Հոռի	ԺԱ	Հոռի	ԺԵ
6	ԻԴ	557 (556)	1108	ԻԱ	Չ/Է	Նաւ	Լ	Հոռի	Չ
	ԻԵ	558 (557)	1109	Բ	Ա	Հոռի	ԺԹ	Հոռի	ԻՉ
	ԻԶ	559 (558)	1110	ԺԳ	Բ	Հոռի	Ը	Հոռի	ԺԱ
	ԻԷ	560 (559)	1111	ԻԴ	Գ	Նաւ	ԻԷ	Հոռի	Գ
7	ԻԸ	561 (560)	1112	Ե	Դ/Ե	Հոռի	ԺՉ	Հոռի	ԻԲ
	ԻԹ	562 (561)	1113	ԺՉ	Չ	Հոռի	Ե	Հոռի	Է
	Լ	563 (562)	1114	ԻԷ	Է	Նաւ	ԻԴ	Նաւ	ԻԹ
	ԼԱ	564 (563)	1115	Ը	Ա	Հոռի	ԺԳ	Հոռի	ԺԹ
8	ԼԲ	565 (564)	1116	ԺԹ	Բ/Գ	Հոռի	Բ	Հոռի	Գ
	ԼԳ	566 (565)	1117	Լ	Դ	Նաւ	ԻԱ	Նաւ	ԻԵ
	ԼԴ	567 (566)	1118	ԺԱ	Ե	Հոռի	Ժ	Հոռի	ԺԵ
	ԼԵ	568 (567)	1119	ԻԲ	Չ	Նաւ	ԻԹ	Նաւ	Լ
9	ԼԶ	569 (568)	1120	Գ	Է/Ա	Հոռի	ԺԸ	Հոռի	ԺԹ
	ԼԷ	570 (569)	1121	ԺԴ	Բ	Հոռի	Է	Հոռի	ԺԱ
	ԼԸ	571 (570)	1122	ԻՉ	Գ	Նաւ	ԻԵ	Նաւ	ԻՉ

Նախ հարկ է նշել, որ Ստեփանոս Մեծրկա որդու ստեղծած ԾԼԲ (532)-ամյա Չատկացուցակը բաղկացած է 28 հատ Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանից: Աղյուսակի առաջին կանոնը վերաբերում է **նահանջին**: Նահանջի համարներն ամեն չորրորդ տարում նշելը բնական է Չատկացուցակի և՛ հուլյան, և՛ հայոց շաբթերի դեպքում, քանի որ հուլյան տոմարն անշարժ էր, և Ստեփանոս Մեծրկա որդու Չատկացուցակը ևս կազմված էր՝ ըստ իր ստեղծած անշարժ տոմարի նախագծի: Այսպես, խոսելով նահանջի տարվա մասին՝ պետք է շեշտել, որ Հայոց տոմարի 452-րդ տարվանից (1003/1004 թթ.) հետո, երբ նավասարդի 1-ը հատում է գարնանային օրահավասարի կետը՝ մարտի 20-ը, հայոց Ծ-եակ թվականին մեկ տարի է ավելանում, քանզի այդ ժամանակ է, որ ավարտին է հասնում Հայկյան 1460-ամյա պարբերաշրջանը, որը հավասար էր հայոց շաբթական տոմարի 1461 տարվա: Այս մասին հիշատակում է Հովհաննես Սարկավագը, նաև Հակոբ Արիմեցին: Մեջբերենք վերջինիս սահմանումը. «...Յորժամ հասարակածն եմուտ ի նաւասարդ, յայնմհետէ ի ֆարտ թիւն գա մինչեւ յօրս... Այս է պատճառն, զի յառաջ հասարակածն գայր...եւ սպա տարէմուտն. եւ այժմ յառաջ տաւնուտն գայ եւ սպա հասարակածն, զի վասն հասարակածն կոխեաց գտարէմուտն եւ էանց յայն կոյս» [4, էջ 79; 2, էջ 225]: Պարզ է դառնում, որ երբ այդ մեկ տարին ավելացել է հայոց թվականին, Հայոց և Հուլյան տոմարների նահանջ տարիները չեն համընկել, և հայոց տոմարի նահանջ տարին ընկել է ֆարտ՝ կենտ [12, էջ 937], թվով տարվա վրա: Այդ է պատճառը, որ Ստեփանոս Մեծրկա որդու Չատկացուցակում ներկա 1085 թ.-ը համընկնում է հայոց 534 թ.-ին: Սրանով պայմանավորված՝ Ծ-եակի երկրորդ շրջապտույտի առաջին նահանջը համապատասխանում է Հուլյան տոմարի 1088 թ.-ին, իսկ Հայոց տոմարի՝ 537 թ.-ին՝ կենտ տարեթիվ: Սակայն, մենք այստեղ երկու արժեք ենք դրել՝ հաշվի առնելով Գ. Բրուսյանի տեսակետն առ այն, որ տոմարական հաշվարկները ճիշտ ստացվելու համար հարկավոր է տարեհաշվից դուրս հանել լրացուցիչ, «եկամուտ» տարին, ինչպես և ցուցել են Հովհաննես Սարկավագն ու Հակոբ Արիմեցին [10, էջեր 101-103]: Վերջինիս մասին է մեզ հուշում նաև Հ. Բաղայանի կազմած Հայոց մեծ թվականի ու ներկա թվականի համեմատական աղյուսակը [3, էջեր 351-352]:

Չատկացուցակի հաջորդ երեք կանոնները վերաբերում են **թվականին**: Երկրորդ կանոնում ներկայացրել ենք Ծ-եակ առաջին շրջապտույտի տարիները, երրորդում՝ Ծ-եակ երկրորդ շրջապտույտի Հայոց մեծ թվականը, իսկ չորրորդում՝ ներկա թվականը: Ներկա 1085 թ.-ի և Հայոց 534 թ.-ի համապատասխանության մասին խոսվեց վերոնշյալում:

Չատկացուցակի՝ Հուլյան տոմարով ներկայացված շաբթում հաջորդ կանոնները՝ հինգերորդն ու վեցերորդը, վերաբերում են **վերադրին և յոթներյակին**: Նախընթաց խոսքում նշվեց, որ Հովհաննես Սարկավագը վերադրի կանոնում կատարեց փոփոխություն՝ 2-ով ավելացնելով Ծիրակացու վերադիրների համակարգը, որն էլ օգտագործել է նաև Ստեփանոս Մեծրկա որդին (տե՛ս վերևում): Իսկ յոթներյակների շաբթը հարկ է սկսել Գ (3) արժեքով, ինչպես պիտի լինի նաև Հովհաննես Սարկավագի դեպքում: Ավելց, որ Հովհաննես Սարկավագի «Պատճեն»-ում կարդում ենք. «Ելթներեակ այսպէս (արտ). կալ գթուականն, Գ (3) ի վերայ սծ կամ Դ (4) ի բաց երթ եւ գայրն երթ Է (7) Է (7), որ մնա՝ ելթներեակ է» [2, էջ 205]: Կատարենք հաշվումները. (1085 + 3) : 7. մնացորդը ստացվում է 3 (Գ): Նշված շաբթում նահանջ տարիներին յոթներյակն ունի երկու արժեք՝ մեկը հունվարի 1-փետրվարի 29-ընկած ժամանակահատվածին է վերաբերում, իսկ երկրորդը՝ տարվա մնացյալ օրերին: Այնուհետև բերվում են **Լուսնի լրման 19-ամյակը և Չատկի օրը** (7-10-րդ կանոններ): Կատարելով օրագյուտի կանոնը, այն է՝ հարկավոր է վերցնել տարվա յոթներյակը, գումարել որոշվող ամսվա կրկնակը, այնուհետև ամսաթիվը, ստացվածը բաժանել 7-ի, և ըստ մնացորդի՝ գտնել շաբաթագիրը: Այսպես, հաշվումները կատարելով 1085 թ.-ի համար՝ ստանանք Չատկի՝ կիրակի օրը. 3 (յոթներյակ) + 6 (ապրիլ ամսվա կրկնակ) + 20 (Չատկի ամսաթիվը) = 29, որն էլ բաժանելով 7-ի՝ կատանանք 1 մնացորդ, որն էլ մեզ հուշում է կիրակի օրվա մասին:

Իսկ ինչ վերաբերում է Չատկացուցակի հայոց շաբթի **յոթներյակների** համակարգին, սպա «Պատճեն»-ներում պահպանվել է հետևյալ կանոնը. «Դարձեալ՝ կա՛լ գԷ (7)երեակ չոմսայեցոցն, Գ (3) ա՛ծ՝ Եքրայեցոցն է, Բ (2) ա՛ծ՝ Յունաց է, Ա (1) առ՝ Ասորոց է, Ա (1) ա՛ծ՝ Եգիպտացոց է եւ Պարսից, Դ (4) ա՛ծ՝ Սարկաւագին է, Գ (3) ա՛ծ՝ Ստեփաննոսին է» [5, էջ 260]: Վերոբերյալից պարզ է դառնում, որ գտնելու համար Հովհաննես Սարկավագի և Ստեփանոս Մեծրկա որդու կիրառած յոթներյակները հայոց շաբթի համար, հարկավոր է հուլյան յոթներյակների արժեքներին համապատասխանաբար գումարել Դ (4) և Գ (3): Այսպես, կատարենք հաշվումները. ըստ Հովհաննես Սարկավագի «Ազնուականոնք ԾԼԲ ամաց հայոց անշարժ տոմարի»-ի՝ ներկա 1085 թ. Չատկը համընկել է ահեկան 13-ին [11, էջ 59]. կիրառելով օրագյուտի կանոնը՝ ստանանք Չատկի՝ կիրակի օրը. 7 (յոթներյակ (3+4)) + 2 (ահեկան ամսվա կրկնակը) + 13 (Չատկի ամսաթիվը) = 22, որն էլ բաժանելով 7-ի՝ կատանանք 1, որն էլ նշանակում է կիրակի: Իսկ նույն 1085 թ.-ի համար Ստեփանոս Մեծրկա որդու Չատկացու-

ցակի հայոց շարքի պարագայում կունենանք հետևյալ պատկերը. 6 (յոթներյակ (3+3)) + 2 (հոռի ամսվա կրկնակ) + 21 (Չատկի ամսաթիվը) = 29, որն էլ բաժանելով 7-ի՝ ստացվում է 1 մնացորդ, այսինքն՝ կիրակի: Ինչպես հուլյան շարքում, այնպես էլ այստեղ նահանջ տարիներին յոթներյակներն ունեն երկու արժեք և 28-ամյա պարբերականություն, այսինքն՝ ՇԼԲ (532)-ամյա Չատկացուցակում կրկնվում են 19 անգամ:

Վերևում նշվեց, որ ՄՄ 1973 ձեռագրում պահպանվել է Մեծրկա որդու յոթներյակների համակարգը, նաև Հովհաննես Սարկավագինը: Բերենք դրանք. Հովհաննես Սարկավագի յոթներյակների համակարգն է. Բ, Գ, Դ, Ե/2, Է, Ա, Բ, Գ/Դ, Ե, 2, Է, Ա/Բ, Գ, Դ, Ե, 2/Է, Ա, Բ, Գ, Դ/Ե, 2, Է, Ա, Բ/Գ, Դ, Ե, 2, Է/Ա [1, թ. 51; 9, էջ 119]:

Ստեփանոս Մեծրկա որդու յոթներյակների համակարգն է՝ Ա, Բ, Դ (պետք է լինի Գ [ուղղումը մերն է՝ Գ. Գ.]), Դ/Ե, 2, Է, Ա, Բ/Գ, Դ, Ե, 2, Է/Ա, Բ, Գ, Դ, Ե/2, Է, Ա, Բ, Գ/Դ, Ե, 2, Է, Ա/Բ, Գ, Դ, Ե, 2/Է [1, թ. 51; 9, էջ 119]:

Բերվածից պարզ է դառնում, որ և՛ Հովհաննես Սարկավագի, և՛ Ստեփանոս Մեծրկա որդու կազմած Չատկացուցակների 19-ամյակների առաջին տարին պետք է սկսել ձեռագրում պահպանված համակարգի 5-րդ արժեքից, այն է՝ Սարկավագի պարագայում՝ Է (7), Մեծրկա որդու պարագայում՝ 2 (6):

Ինչ վերաբերում է հայոց շարքի վերադիրների արժեքներին, ապա Մեծրկա որդին օգտագործել է վերադիրների նույն արժեքները, ինչ Հովհաննես Սարկավագը՝ Լուսնի լրման 10-րդ տարվա վերադրի արժեքը ԺՉ (16) ընդունելով, իսկ 19-ամյակի սկզբից հաշված՝ դրանք կունենան հետևյալ արժեքները՝ Է, ԺԸ, ԻԹ, Ժ, ԻԱ, Բ, ԺԳ, ԻԴ, Ե, ԺԶ, ԻԷ, Ը, ԺԹ, Լ, ԺԱ, ԻԲ, Գ, ԺԴ, ԻԶ [7, էջեր 138-139]: Այնուհետև, ներկայացվում են **Լուսնի լրման և Չատկի օրերը**՝ ըստ Մեծրկա որդու անշարժ տոմարի նախագծի, որի սկզբնակետն էր 1080 թ. նավասարդ 1 = մարտի 1:

Եզրակացություն

Այսպիսով՝ հետևելով մեր հոդվածի նպատակին և հիմք ընդունելով Ստեփանոս Մեծրկա որդու անշարժ տոմարի նախագծի ելակետը, այն է՝ 1080 թ. նավասարդ 1 = մարտի 1, ներկայացրել ենք տարվա ընթացքում տեղի ունեցող տոների, արևային տարվա եղանակների ու աստղագիտական երևույթների ամսաթվային համարժեքները՝ ըստ հուլյան և Ստեփանոս Մեծրկա որդու կազմած անշարժ տոմարի նախագծի: Հիմնվելով ՄՄ 1973 ձեռագրում պահպանված հիշատակությունների, նաև Ռ. Վարդանյանի ուսումնասիրությունների վրա՝ վերականգնել ենք Ստեփանոս Մեծրկա որդու կազմած Չատկացուցակի երկու 19-ամյակի պատկերը՝ ըստ հուլյան և հայոց (Ստեփանոս Մեծրկա որդու)

անշարժ տոմարների: Շատ հնարավոր է, որ Ստեփանոս Մեծրկա որդու կազմած ՇԼԲ (532)-ամյա Չատկացուցակը պարունակած լինի նաև այլ կանոններ՝ Տանուտեր, Առաջավոր, Բարեկենդան, Պենտեկոստե, Վարդավառ և այլն: Վերականգնության այս տարբերակում մենք ներկայացրել ենք Չատկացուցակի գլխավոր կանոնները, առանց որոնց հնարավոր չէր լինի տեսնել հիմնական պատկերը: Իսկ թվարկված մյուս բաղադրիչները հեշտորեն կարելի է ստանալ համապատասխան հաշվարկների միջոցով, որը անելու ենք առաջիկայում, երբ հրատարակենք ողջ Չատկացուցակը:

Օգտագործված գրականության ցանկ

1. «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (ՄՄ), ձեռ. 1973:
2. **Բրահամյան, Ա.** Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը: – Երևան: ԵՊՀ հրատ.: 1956: – 371 էջ:
3. **Բաղայան, Հ.** Օրացույցի պատմություն: – Երևան: ՀՄՍՀ ԳԱ հրատ.: 1970: – 562 էջ+ 2 ծավալած քարտեզ:
4. **Հակոբ Արիմեցի,** Տոմարագիտական աշխատություններ, աշխ. Չ. Էյնաթյանի: – Երևան: ՀՄՍՀ ԳԱ հրատ.: 1987: – 394 էջ:
5. «Պատճեն տումարի» (Է-ԺԵ. դդ.), Քննություն եւ բնագրեր, աշխ. Չ. Էյնաթյանի, աշխ. եւ խմբ.՝ **Գ. Տեր-Վարդանեանի:** – Երևան: «Քննասեր» հրատ.: 2002: – 296 էջ:
6. **Թումանյան, Բ.** Տոմարի պատմություն: Երևան: – Երևանի պետ. համալսարանի հրատ.: 1972: – 229 էջ:
7. **Վարդանյան, Ռ.** Անանիայի Ծիրակացույ (Ծիրակունդ) համարողի ՇԼԲ կարգը: – Երևան: ԵՊՀ հրատ.: 2015: – 264 էջ:
8. **Վարդանյան, Ռ.** «Պատճեն տոմարի հայոց» -ի խմբագրությունների ժամանակի որոշումը (6-18-րդ դդ.): – Երևան: ԵՊՀ հրատ.: 2007: – 201 էջ:
9. **Միմոնյան, Գ.** Հովհաննես Սարկավագը և իր «Մեկնություն տումարիս հայկազնեայ»-ն, Ատենախոսություն: – Երևան: 2013: – 179 + 41 էջ: Անտիպ:
10. **Քրուայան, Գ.** Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. Հայոց փոքր թուական (Սարկավագադիր տոմար): Էջեր 100-116:// «Էջմիածին» ամսագիր: Մ. Էջմիածին: 1994: Դ-Ե:
11. **Միմոնյան, Գ.** Հովհաննես Սարկավագի ՇԼԲ (532)-ամյա Չատկացուցակները: Էջեր 45-89: // Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, 2: – Երևան: ԵՊՀ հրատ.: 2011:
12. **Աւետիքեան, Գ.** Սիրմելեան Խ., Ալգերեան Մ. Նոր բառգիրք հայկազեան լեզուի: Հատոր Բ: Վենետիկ: 1837 : 1060 էջ:

Շճան/Հանձնվել է՝ 25.10.2024
 Рецензирована/Գրախոսվել է՝ 01.11.2024
 Принята/Ընդունվել է՝ 08.11.2024